ցած էր Սուլթան Ահմատի զօրքը, ուստի հրամայեց իր զօրքին պաշարել այդ բերդը, եւ զօրքը թէեւ դրսի բերդին տիրացաւ ու աւերեց, բայց միջնաբերդը առնել չկարողացաւ. եւ որովհետեւ շատ անառիկ բերդ էր, ուստի անհնար եղաւ գրաւելն եւ Ամիր Թէյմուրն հրամայեց, որ սարդարներն հերթով պաշարեն բերդն մինչեւ առնուի. մինչեւ տասն տարի ամբողջ Ասիական բերդն պաշարուեց եւ միայն 10 տարուց յետոյ, այն է 799 թ. հիջրէի, սոմն ստիպեց բնակիչներին անձնատուր լինել։» (Զեռագիր պատմութիւն պարսկերէն։)

Այս բոլորից ակնյայտնի է, որ գէթ մինչեւ 1400 թ. կամ մինչեւ ԺԵ. դար՝ կամուրջը ողջ է եղել եւ դրանից յետոյ կործանուել է։ Գաղթականութեան ժամանակ կամուրջն արդէն գոյութիւն չունէր եւ անցնում էին նաւակներով ու լաստերով, ինչպէս վերեւում բացայայտեցինք։ Առաքել Վարդապետ, որ ժամանակակից էր Շահաբաս Ա.-ոյն, իր պատմութեան մէջ ոչ միայն չէ յիշում կամրջի քանդելն այդ թագաւորի ձեռքով. (ըստ ժողովրդական աւանդութեան՝ կամուրջն շինել է Խօջա Խաչիկն, իսկ կործանել է՝ Շահաբասը,) այլ մինչեւ անգամ կամրջի մասին ոչ մի խօսք չէ ասում, այլ ընդ հակառակն շատ բացայայտ կերպով յայտնում է, որ այդ միջոցին Երասխի վրայ ոչ մի կամուրջ չկար, քանի որ նկարագրում է Հայերի քաշած անօրինակ տառապանքը գետն անցնելիս

կատամահ տանջանքներովն 914 թ.։ Հայաստանի ամենանշանաւոր ամրոցներից մին էր եւ ԺԲ. դարում Ռուպէնեան ազգի ժառանգական կալուածն։ Այդտեղ յիշուած դրսի բերդն Երնջակ քաղաքն է, որ այժմ աւերակ է։